

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՑ

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

Էջմիածին, Հայաստան

Հոգևոր հայրեր Էջմիածնի Մայր Աթոռի Դիվանին,

Վերջին ամիսներու աստիճանական շիջումը Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետին արդեն ուրվագծած էր մեր հոգիներուն ու սիրտերուն վերև մըթագնող հեռանկարը Անոր անխուսափելի վախճանին:

Այսուհանդերձ ահավոր ցնցումով բնորոնվեցավ Հայրապետին վախճանումը մեր կողմե, ինչպես բովանդակ հայության: Անոր անդարմանելի կորուստը ազգովին կորբացնե մեզ և անմխիթար կթողու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Վազգեն Առաջին Հայրապետը բարձրացած էր Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատմական գահուն վրա՝ մեր ժողովուրդի և հայրենիքի կյանքին ամենեն ճակատագրական մեկ շրջանին, երբ կառնամանակվեին կրոնական սզատությունները խորհրդային սահմաններեն ներս և երբ ցուրտ պատերազմի փոթորիկները կալեկոծեին անտիրական հոսը Հայ Եկեղեցիին՝ սփյուռքի հեռաստաններուն վրա:

Իբրև բարի, առաքինի և քաջ հովիվ, որ կգիտակցեր իրեն սահմանված պատմական առաքելության ճակատագրական բնույթին, Ան արիությամբ վերցուց իր հովվապետի պաշտոնը և իր կոչումին ամբողջական նվիրումով ծառայեց Մայր Աթոռին և անոր միջոցավ՝ Հայաստանյայց Եկեղեցիին:

Չորս տասնամյակներու վրա ծավալող Անոր հայրապետական ծառայությունը Մայր Եկեղեցվո և հայ ժողովուրդին ոսկի տառերով պիտի արձանագրվի մեր պատմության տարեգրության մեջ: Անոր անվան հետ կապված պիտի մնան երկու նշանակալից արժանիքներ՝ իբրև Շինարար Հայրապետ և Միարար Հայրապետ:

Արդարև, Հայաստանի կյանքին ամենածանր տարիներուն Ան ծաղկեցուց Մայր Աթոռը՝ շինարարական բազում իրագործումներով և Սուրբ Էջմիածնի Մայրավանքը, աննախընթաց վերանորոգումով, դարձավ օվասիս մը՝ հավատքի տան, սերունդներու դաստիարակության և նշխարներու պահպանման գանձատուներու՝ հպարտություն սփռելով հայրենաբնակ թե տարածասփյուռ հայության հոգիներուն մեջ:

Շինարարական անդուլ ծրագրումներու և կառուցողական պատմական իրագործումներու զուգահեռ Վեհափառ Հայրապետը արիությամբ և իմաստությամբ դիմավորեց մեր Եկեղեցվո մեկության ու միասնականության սպառնացող ամեն վտանգ: Ան ձեռնարկեց հեռավոր ճամբորդությանց, միարարական ծրագիրներու, բարի կամեցողության արարքներու և միով բանիվ՝ ամեն միջոցի, որ կրնար մի և ամբողջական պահել մեր Եկեղեցին: Իցիվ թե Ան կարողացած ըլլա՞ր ի կենդանության իրականացած տեսնել ամբողջական միությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո՝ իր հովվապետական խոհեմ մականին ներքև:

Այսուհանդերձ Ան իր հառաջացյալ տարիքին բախտավորությունն ունեցավ ողջունելու արշալույսը մեր անկախացող հայրենիքին և մեր ազգը ներ-

տվեց, որ կատարի Իր Եկեղեցու այս մեծ սպասավորը՝ ի նպաստ հայ ժողովրդի միասնության՝ հատկապես Հայաստան աշխարհի սպրած այս խառնաշփոթ ժամանակներում:

ՌՈՒՆԵՐՏ ԿՅՈՒՂԵՆԿՅԱՆ

Լիսաբոն, 18 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ,
ԴԻՎԱՆԱԴԵՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

Ս. Էջմիածին

Համայն հայ ժողովուրդը խոր սուգի մատնվեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Ա. Հայրապետի վախճանման գույժով:

Քառասուն երկար տարիներ Նորին Սրբությունը մեծ նվիրումով և խոր հավատքով ծառայեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին և հայ ազգին: Երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի շնորհիվ Հայաստանյայց Եկեղեցին ավելի զորացավ ու բարգավաճեցավ, արժանացավ միջազգային վարկի ու առավել ևս ճանչցվեցավ բոլոր քրիստոնյա Եկեղեցիներուն և միջազգային եկեղեցական խորհուրդներուն կողմէ: Անոր ներկայությունը շնորհաբեր օրհնություն մը եղավ Հայ Եկեղեցիին ու հայ ազգին համար:

Մեր խորագգաց ցավակցությունը կհայտնենք այս շատ տխուր առթիվ, և վստահ ենք, որ Տերը երջանկահիշատակ Հայոց Հայրապետին վաստակին ու ավանդին արժանի հաջորդ մը պիտի բազմեցնե Հայաստանյայց Եկեղեցվո կեդրոն Ս. Էջմիածնի Մայր Աթոռին վրա:

ԳԵՈՐԳ ԵՎ ՍԻՐՎԱՐԴ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Նյու Ճըրզի, 23 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Էջմիածին, Հայաստան

Գերաշնորհ Տեղապահ Սրբազան Հայր,
Միաբանություն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի,

Ընդունեցեք մեր խորագգաց ցավակցությունները Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետ Վազգեն Առաջինի վախճանման տխուր առիթով: Խունկ և աղոթք, լույս և ուխտ՝ Իր գերեզմանին: Խաղաղ օրեր տառապյալ

Իր ազգին, որ տառապած Իր հոգին հանգչի և հրճվի՝ Երկնային Հրեշտակաց Դասեն:

**ԶՎԱՐԹ ՊՈՅԱԾՅԱՆ ԵՎ ԶԱՎԱԿՈՒՆՔ,
ՍԵՊՈՒՀ ԵՎ ԱՐԱ**

Թորոնթո, 25 օգոստոս 1994 թ.

* * *

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Սուրբ Էջմիածին, Հայաստան

Հոգևոր Հայրեր,

Խորունկ վիշտով տեղեկացանք Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին վախճանման գույժը: Անձամբ ճանչցած ըլլալով ազգիս հոգևոր գերագույն Պետը, անմոռանալի հիշատակներ կպահենք իրմե:

Մասնավորաբար հանգուցյալ ամուսինս՝ Էտվլըդ Մարտիկյան, խորունկ հիացում ուներ մեր Հայրապետին հանդեպ և հոգևին կատարել անոր ազգաշեն ծրագիրներուն:

Այս տխուր առիթով ընտանիքիս բոլոր անդամները և ես լուրջամբ կխոնարհինք Վեհափառի հիշատակին առջև և մեր զգացված ցավակցությունները կհայտնենք Մայր Աթոռին և անոր նվիրյալ միաբանության:

Թող բարձրյալն Աստված երկնային լույսերու հավիտենականության արժանացնե անոր հոգին:

Անկեղծ վշտակցությամբ՝

ՀԵԼԵՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ

18 օգոստոս 1994 թ.

